

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/4

30 ապրիլի 2013թ.

Քննարկվեց <Ինտեգրալ ՍՈՖ> ՍՊԸ 18.04.2013թ. թիվ 27 գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 08.04.2013թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 221546 որոշման դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 04.03.2013թ. թիվ 2202593 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Ինտեգրալ ՍՈՖ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային պարտավորությունների հաշվարկման նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 221546 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես արձանագրվել է.

07.03.2013թ-ին ժամը 19:00-ից օգտվեցին ք.Երևան, Ազատության 24 հասցեում գործող ռեստորանի ծառայություններից, մուտքի համար վճարելով 14.000 դրամ կանխին գումար, որի դիմաց չտրամադրվեց ՀԴՄ կտրոն: Այնուհետև օգտվելով հանրային սննդի ծառայություններից, ներկայացված հաշվի՝ 29600 դրամի դիմաց կանխիկ գումարով վճարվեց 10.000 ՀՀ դրամ և 50 ԱՄՆ դոլար արտարժույթով:

Աշխատակիցը ստացավ վճարված ընդհանուր գումարը, սակայն համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 23:18-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո մուտքավճարը և մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարման ընդհանուր գումարը՝ 43600 դրամը, ժամը 23:19-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոնը և ժամը 23:20-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը 43600 դրամ ընդհանուր գումարով: Պարզվեց նաև, որ ՀԴՄ-ի ժամը սխալ էր աշխատում:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի <բ> ենթակետով: Տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել է նաև <Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետը, քննելով 29.03.2013թ-ի թիվ 276 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, 08.04.2013թ-ին ընդունել է թիվ 221546 որոշումն ընկերության տնօրեն Արմեն Մինասյանին <վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի առաջին պարբերության հատկանիշներով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

<Ինտեգրալ ՍՈՖ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

2013թ. ապրիլի 12-ին <Ինտեգրալ ՍՈՖ> ՍՊԸ-ն նամակով ստացել է Հրազդանի ՏՀՏ պետի որոշումը, որտեղ նշված է, որ 2013թ. մարտի 7-ին Հրազդանի ՏՀՏ-ի կողմից

ընկերությունում կատարվել է ռաումնասիրություն և կազմվել թիվ 2202593 արձանագրությունը:

Արձանագրությունում նշված է, որ ընկերության կողմից շահագործվող <Վիվալդի> հանդիսությունների սրահամ կատարվել է հսկիչ գնում՝ (տրվել է 50 ԱՄՆ դոլար և 10000 ՀՀ դրամ), որի համար ՏՀՏ-ի պետը որոշում է կայացրել ընկերությանը ենթարկել տույժի 2.000.000 դրամի չափով: Ես, որպես ընկերության տնօրեն Հրազդանի ՏՀՏ-ի պետին ներկայացրել եմ իմ գրավոր բացատրությունը, սակայն ոչ մի պատասխան չեմ ստացել, որի պատճառով համաձայն չեմ ՏՀՏ-ի պետի որոշման հետ: Ուստի խնդրում եմ Ձեր միջամտությունը և օբյեկտիվ որոշումը կապված տվյալ հարցի հետ:

2013թ. մարտի 7-ին, երեկոյան ժամը 22:00-ի սահմաններում ինձ զանգահարեց իմ աշխատակից Ռաֆայել Սաղաթեյանը և ասաց, որ Հրազդանի հարկային տեսչության աշխատակիցները եկել են ստուգում իրականացնելու: Ես հեռախոսով խոսեցի Հրազդանի ՏՀՏ-ի աշխատակիցներից մեկի հետ և մոտ 30 րոպեից արդեն գտնվում էի <ՎԻՎԱԼԴԻ> հանդիսությունների սրահում, որտեղ մի քանի ՏՀՏ-ի աշխատակիցներ ներկայացան ինձ, ցույց տվեցին 50 ԱՄՆ դոլարի պատճենը Ա4 ֆորմատի թղթի վրա, և հայտարարեցին, որ մատուցողներից մեկը սպասարկել է իրենց և վերցրել է այդ գումարը: Իմ կողմից հարկային տեսչության աշխատակիցներին առաջարկվել է գնալ հանդիսությունների սրահի երկրորդ հարկ, որտեղ ինձ տրվեց թիվ 2202593 ռաումնասիրության և թիվ 1103427 ստուգման հանձնարարագրերը: Նշեմ, որ թիվ 1103427 ստուգման հանձնարարագիրը 15.03.2013թ. ՊԵԿ նախագահի հրամանով կասեցվել է: Ես՝ հարկային տեսչության աշխատակիցներին առաջարկեցի կատարել համատեղ դրամարկղի ստուգում և տվյալ մատուցողներից վերցնել համապատասխան բացատրագրեր: Սակայն, տեսչության աշխատակիցները մերժեցին իմ առաջարկը, հայտարարելով, որ իմաստ չկա: Կցանկանամ նշել, որ այն պահին, երբ ես զրուցում էի հարկային տեսչության աշխատակցի հետ մյուս աշխատակիցները ինչ-որ բան էին գրում, որը հետագայում պարզվեց իրենց կողմից կազմված արձանագրությունն է: Ինձ առաջարկվեց ստորագրել այն, սակայն ես մերժեցի, քանի որ այդ արձանագրությունը չի կազմվել իմ ներկայությամբ: Ես առաջարկեցի թույլ տալ կարդալ իրենց կողմից կազմված արձանագրությունը, սակայն հարկային տեսչության աշխատակիցները մերժեցին, հայտարարելով, որ եթե այս պահին չես ստորագրում, ինչ միտք ունի կարդալը:

Ես ինքնուրույն կատարեցի դրամարկղի ստուգում, որտեղ չհայտնաբերեցի 50 ԱՄՆ դոլարը: Զրուցեցի բոլոր մատուցողների հետ և պարզեցի հետևյալ հանգամանքը.

սեղանը սպասարկել է մի մատուցող, իսկ գումարը, գումարի ստացման գրքույկի մեջ դրված, տրվել է մեկ այլ մատուցողի: Մատուցողը պարզել է, որ գրքույկի մեջ դրված է ՀՀ դրամից բացի նաև 50 ԱՄՆ դոլար, որից հետո նա հետ է վերադարձել այն սեղանի մոտ, որտեղից վերցրել է գրքույկով գումարը, սակայն տվյալ սեղանը սպասարկող մատուցողը հայտնել է, որ նշված սեղանից օգտվողները գնացել են: Աշխատանքն ավարտելուց հետո մատուցողը գնացել է փոխանակման կետ, որտեղ կատարել է փոխանակում, որից հետո նոր ՀՀ դրամը մատքագրել է դրամարկղ և տպվել է ՀԴՄ կտրոն:

Ես, որպես <Ինտեգրալ ՍՈՖ> ՍՊԸ տնօրեն առարկում եմ Հրազդանի ՏՀՏ պետի միակողմանի ընդունած որոշմանը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և արձանագրությունը կազմած անձի ներկայացված փաստարկները, ռաումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 04.03.2013թ. թիվ 2202593 հանձնարարագրի, վերջինումս ընդգրկված պաշտոնատար անձինք 07.03.2013թ-ին ժամը 19:00-ին այցելել են ք.Երևան, Ազատության 24 հասցեում գործող ռեստորանային համալիր: Մուտքի համար վճարել են 14.000 դրամ կանխիկ գումար, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև օգտվելով հանրային սննդի ծառայություններից մատուցողից պահանջվել է պատվիրված սննդի դիմաց վճարը:

Մատուցողը ներկայացրել է պահանջված հաշիվը, որի հանրագումարը կազմել է 29600 դրամ: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից կանխիկ գումարով վճարվել է 10.000 ՀՀ դրամ և 50 ԱՄՆ դոլար: Ընդ որում, նիստին մասնակցող ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձը պնդեց, որ մատուցողին նախապես տեղեկացվել է պահանջված գումարի մի մասն արտարժույթով վճարելու մասին, ինչին մատուցողը չի առարկել: Մատուցողը ստացել է վճարված ընդհանուր գումարը, սակայն համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Դրանից հետո ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները, ինչպես նաև թույլ է տրվել <Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պահանջների խախտում:

Քննարկվող դեպքում մատուցված հանրային սննդի ծառայության դիմաց վճարվել է 10.000 ՀՀ դրամ և 50 ԱՄՆ դոլար, որոնք ընդունվել են ընկերության աշխատակցի կողմից: Ընդ որում, մատուցված ծառայության դիմաց նաև 50 ԱՄՆ դոլար վճարված լինելու և այն ընկերության աշխատակցի կողմից ընդունվելու փաստն, ըստ էության, ընդունում է նաև ընկերության տնօրենը, քանի որ վերջինիս պնդմամբ 50 ԱՄՆ դոլարն ընկերության աշխատակցի կողմից 07.03.2013թ-ին ժամը 23:06-ին Կոմիտասի պող., հ 60-2 հասցեում գտնվող փոխանակման կետում փոխանակվել է 20.450 ՀՀ դրամով (հիմք՝ գործարքի փաստը հավաստող փաստաթուղթը) և նոր միայն մուտքագրվել է ընկերության դրամարկը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ տվյալ դեպքում խախտվել են <Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, բացառությամբ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների, ընթացիկ արժույթային գործարքների դիմաց վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժույթային գործարքները կանխիկ և անկանխիկ իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Վերոգրյալ իրավանորմի պահանջների խախտման համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 08.04.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 221546 որոշմամբ ընկերության տնօրենը <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի առաջին պարբերության հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 08.04.2013թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 221546 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ առանց բավարարման:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի անդամ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ